

ԱՐՄԵՆ ԵԶԵԿՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
իրավագիտության ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հետազոտության հիմնական նպատակն է դատական փորձագետի հասկացության բացահայտումը, նրա, որպես դատավարական հատուկ սուբյեկտի, էության, առանձնահատկությունների, այդ թվում՝ մասնագիտական կարողությունների ու պիտանիության ներկայացումը, և գործունեության ոլորտի մանրամասնումը: Ուսումնասիրության առարկա է հանդիսանում դատական և արտադատական փորձագետի կարգավիճակի պարզաբանումը, նրա դերն ու նշանակությունը պրակտիկայում: Վերը նշված խնդիրների իրավական կարգավորման տեսական և գործնական առավել հանգամանալից վերլուծության անհրաժեշտությունից ելնելով՝ մեր կողմից կկիրառվեն որոշակի հետազոտական մեթոդներ, որոնք նպատակ են հետապնդում ապահովել հետազոտության և դրա գիտական արդյունքների օբյեկտիվությունն ու արժանահավատությունը:

Հիմնարար բառեր - դատական փորձագետ, հատուկ գիտելիքներ, փորձաքննության սուբյեկտ, փորձագետին բացարկ հայտնելու ինստիտուտ, փորձագետի անկախություն:

Դատական փորձաքննությունը կատարվում է հատուկ գիտելիքներով օժտված (գիտակ) անձանց՝ փորձագետների կողմից, որոնք փաստերի վերլուծությունը, դրանց բացատրությունը կատարում են հատուկ գիտելիքների՝ գիտության տվյալների և իրենց ունեցած հատուկ փորձի հիման վրա: Ընդ որում հատուկ գիտելիքներ ասելով պետք է հասկանալ բոլոր այն գիտելիքները, որոնք դուրս են իրավական գիտելիքների շրջանակից և մատչելի են հասարակության ոչ բոլոր անդամներին, այլ միայն առանձին բնագավառի մասնագետներին:

Փորձագետի, որպես դատավարական հատուկ սուբյեկտի, էությանը, կարգավիճակին, առանձնահատկություններին, գործունեության ոլորտի մասին դրույթներին երկար ժամանակ է, ինչ կարևորություն է տրվում դատական գործի ըստ էության լուծման ժամանակ: Եթե փորձենք ստուգաբանել «փորձագետ» բառը, ապա պարզ կդառնա, որ լեզվաբանական արմատները սկիզբ են առնում լատիներեն «expertus» բառից, որը նշանակում է փորձառու, իրագեկ, գիտակ:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունում ոլորտը կարգավորող իրավական ակտերի, մասնավորապես՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի, որտեղ իրավամբ պետք է փաստել, որ ոչ ամբողջությամբ է տրված փորձագետի էության վերաբերյալ տվյալներ, իրավաբանական գրականության մեջ բազմաթիվ հեղինակներ փորձ են կատարել բնորոշելու փորձագետին,

նրա էությունը և նրա, որպես դատավարական հատուկ սուբյեկտի, առանձնահատկությունները:

Մի շարք հեղինակների կարծիքով փորձագետ է համարվում այն անձը, մասնագետը, ով հրավիրվել կամ նշանակվել է որակյալ եզրակացություն տալու այն հարցի վերաբերյալ, որն այլ անձանց կողմից դիտվում է որպես հատուկ գիտելիքների կիրառում պարունակող բնագավառ կամ այդ հարցի շուրջ անհրաժեշտ է հատուկ գիտելիքներին տիրապետող անձի հատուկ կարծիք¹:

Գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքը բավարարվել է հետևյալ բնորոշմամբ. «դատարանում որպես փորձագետ կարող է հանդես գալ համապատասխան որակավորում ունեցող և սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ու կարգով դատարանի կողմից նշանակվող անձը: Անձը, ում հանձնարարված է փորձաքննություն կատարել, պարտավոր է ներկայանալ դատարանի կանչով և օբյեկտիվ եզրակացություն տալ իրեն առաջադրված հարցերի հիման վրա» (Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր):

Առաջին հայացքից ակհայտ է, որ օրենսդիրը բավարարվել է փորձագետի էության և հասկացության բացահայտման վերաբերյալ սեղմ տվյալների օգտագործմամբ: Ինչպես երևում է օրենքը չի պահանջում, որպեսզի դատական փորձաքննությունը պարտադիր կարգով կատարվի պետական փորձագիտական հիմնարկների աշխատակիցներ

www.journal.lawinstitute.am

րի կողմից: Որպես փորձագետ կարող է նշանակվել ցանկացած անձ, ով տիրապետում է անհրաժեշտ մասնագիտական տվյալների, որոնք անհրաժեշտ են եզրակացություն տալու համար: Այսպիսով, քաղաքացիական գործերով դատական փորձագետն այն անձն է, ով տիրապետում է հատուկ գիտելիքների և քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում ու կարգով դատարանի կողմից նշանակվում փորձաքննություն անցկացնելու և փորձագիտական եզրակացություն տալու համար:

ՀՀ օրենսդրությամբ հատուկ գիտելիքների կիրառման անհրաժեշտության պարագայում փորձագետի մասնակցությունը դատավարությանը պարտադիր է նույնիսկ այն դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինը տիրապետում է համապատասխան հատուկ գիտելիքների: Այս առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածը սահմանում է. «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետների, ընթերականների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:

Ընդհանուր կանոնի համաձայն փորձագետ է հանդիսանում հատուկ գիտելիքների տիրապետող ֆիզիկական անձը, որը դատարանի կողմից ներգրավվում է գործի փաստական հանգամանքների բացահայտման գործընթացին: Այլ կերպ ասած, փորձագետը վարույթն իրականացնող մարմնի, մասնավորապես՝ դատարանի կողմից հրավիրվող անձ է, ով իր մասնագիտական գիտելիքները ներդնում է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման գործում²: Փորձաքննության սուբյեկտն այն ֆիզիկական անձն է (փորձագետը) ով գործով իրականացնում է համապատասխան փորձաքննությունը:

Մասնագիտական գրականության մեջ փորձագետին առաջադրվող պահանջների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փորձագետը մի կողմից պետք է ապահովի փորձաքննության գիտական բարձր մակարդակը, իսկ մյուս կողմից՝ եզրակացության օբյեկտիվությունը և անաչառությունը: Այս խնդիրների լուծման համար անձը, ով նշանակվել է փորձագետ, պետք է՝

1. տիրապետի համապատասխան հատուկ գիտելիքների,

2. լինի բարձր կարգի որակավորման մասնագետ,

3. փորձաքննությունը կատարի և եզրակացությունը կազմի օբյեկտիվ և անաչառ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ օրենսդրի կողմից փորձագետին առաջադրվող պահանջ է համապատասխան որակավորում ունենալը (ՀՀ ՔԳՕ հոդված 45 կետ 1) և գիտելիքների համապատասխան բնագավառում գիտակ լինելը, որպիսիք պարզելու համար գործին մասնակցող անձինք կարող են միջնորդել, որ մինչև փորձաքննություն նշանակելը փորձագետը կամ փորձագետները հրավիրվեն դատարան՝ վերջիններիս հարցեր տալու նպատակով (ՀՀ ՔԳՕ հոդված 60 կետ 4): Ուստի, անհրաժեշտ է բացահայտել թե ի՞նչ է նշանակում «փորձագետի գիտակ լինելը»: Սույն դրույթն բացահայտված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում, ըստ որի 35-րդ հոդվածի փորձագետ կարող է համարվել այն անձը, ով իր կրթության, ունակության, հմտության կամ փորձի շնորհիվ կարող է դատարանին ցուցմունք տալ տվյալ ապացույցի կամ փաստի վերաբերյալ եզրակացության ձևով՝ ունենալով գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ իմացություն: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը մանրամասնում է, թե ի՞նչ ասել է «գիտելիքների համապատասխան բնագավառում փորձագետի գիտակ լինելը»: Այս նորմը, կարծում ենք, պետք է ամրագրվի նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45 հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան որակավորում չունենալու հատկանիշը շատ նեղ է և բացառում է փորձագետ նշանակել այն անձին, ով իր փորձի, հմտության կամ ունակության շնորհիվ կարող է փորձագետ նշանակվել: Մինչդեռ, փորձագետին միայն որակավորում ունենալը վերագրելը կարող է դատարանի առջև վերջինս որևէ մարմնի կողմից պաշտոնական որակավորում չունի համարելու և անաչառության պահանջները հիմք հանդիսանալ: Վերագրյալի հիման վրա համակարծիք ենք իրավաբանական գրականությունում հնչեցված այն մտտեցմանը, որ դատարանում, որպես փորձագետ, կարող է հանդես գալ համապատասխան որակավորում, կրթու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյուն, ունակություն կամ փորձ ունեցող գործունակ ֆիզիկական անձը: Միևնույն ժամանակ, պետք է փաստել, որ ո՛չ այնքան հիմնավոր է պարզապես որակավորում ունենալու փաստի առկայությունը ներկայիս իրավիճակում, երբ հանրապետությունում բացակայում է փորձագիտական գործունեության որակավորման շնորհման և դադարեցման միասնական ընթացակարգեր: Այսպիսով փորձագետին ներկայացվող առաջին պահանջը վերջինիս գիտակ լինելն է կամ այսպես կոչված *փորձագետի ձեռնահասությունը*:

Հայտնի է, որ փորձագետի ձեռնահասությունը փորձաքննության առարկային վերաբերող առաջադրված հարցերը լուծելու ունակությունն է, որը հիմնված է փորձագետի հատուկ գիտելիքների վրա³:

Փորձագետի ձեռնահասությունը որոշվում է նրա կրթության և մասնագիտական պատրաստվածության մակարդակով, ինչպես նաև հետազոտությունների տվյալ բնագավառում աշխատանքի փորձով: Փորձագիտական հիմնարկներում փորձագետի ձեռնահասությունն ստուգվում և հավաստվում է համապատասխան որակավորման հանձնաժողովների կողմից, որն ստուգված անձին տալիս է ինքնուրույնաբար որոշակի տեսակի փորձաքննություններ կատարելու իրավունքի համապատասխան փաստաթուղթ (թույլտվություն): Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ փորձագետի ձեռնահասության, մասնագիտական կարողություններն ու պիտանիությունը հավաստվում է որակավորման փաստաթղթով:

Փորձագետի հատուկ գիտելիքներ ասելով պետք է նկատի ունենալ որոշակի տեսակի փորձաքննության բնագավառի գիտական տվյալների ամբողջությունը, որոնք փորձագետը ձեռք է բերել բազային կրթության, մասնագիտական որակավորման, ինչպես նաև դատական համապատասխան փորձաքննության բնագավառում աշխատանքային փորձի արդյունքում:

Փորձագետի եզրակացությունը գիտականորեն հիմնավորված չի կարող համարվել, եթե փորձագետի կողմից լուծվող հարցերը վերաբերում են նշանակված փորձաքննությանը, սակայն դուրս են տվյալ փորձագետի ձեռնահասության սահմաններից, այսինքն՝ տվյալ հարցը վերաբերում է նշանակված փորձաքննության առարկային, սակայն դուրս է տվյալ փորձագետի հատուկ գիտելիքների շրջա-

նակից: Հետևաբար կարելի է նշել, որ փորձագետի ձեռնահասությունը փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության հիմնական չափանիշներից է, այսինքն՝ փորձաքննությունը կատարող փորձագետը փորձաքննությունը կատարել է իր ձեռնահասության սահմաններում, թե՛ ոչ: Կարծում ենք, որ այս չափանիշը պետք է զետեղվի գործող իրավակարգավորումներում, որն էլ հիմք կհանդիսանա դատարանի կողմից փորձագետի եզրակացության գնահատման ժամանակ արժանահավատության որոշման համար:

Փորձագետին ներկայացվող պահանջները, սակայն չեն սահմանափակվում համապատասխան բնագավառում որակավորված և գիտակ լինելու պարտադիր պահանջով: Հաջորդ պահանջը, որին պետք է համապատասխանի փորձագետը, վերջինիս օբյեկտիվությունն ու անաչառությունն է: Համապատասխան բնագավառում փորձագետի գիտակ լինելը և որոշակի ունակություններ ունենալը դեռևս բավարար չէ փորձագետի եզրակացության օբյեկտիվությունն ու անաչառությունն ապահովելու համար: Փորձագետի անաչառությունը և օբյեկտիվությունը պետք է ապահովվի համապատասխան իրավական երաշխիքներով: Այս կապակցությամբ պետք է նշել, որ նախկինում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածը (մինչև 28.11.2007թ.) արդարացիորեն ամրագրել էր փորձագետին բացարկ հայտնելու ինստիտուտը՝ սպառնիչ թվարկելով բացարկի հիմքերը: Այդպիսիք էին հանդիսանում գործի քննության պահին կամ նախկինում նրա ծառայողական կամ այլ կախվածությունը գործին մասնակցող անձանցից կամ նրանց ներկայացուցիչներից, նրա կատարած վերստուգումը կամ փորձաքննությունը, որի նյութերը հիմք կամ առիթ են ծառայել դատարան դիմելու համար: Բացի այդ քաղաքացիական դատավարությունում փորձագետի կարգավիճակը դիտվում էր որպես անհամատեղելի դատավորի, դատախազի, վկայի, թարգմանչի, ներկայացուցչի, դատական միստի քարտուղարի կարգավիճակի հետ, որոնք նույնպես բացարկի հիմք էին հանդիսանում: Ավելին, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածը, որպես փորձագետի բացարկի հիմք, վերը նշված հիմքերից բացի, նախատեսում էր նաև փորձագետին ու կողմերին, գործին մասնակցող այլ անձանց, նրանց ներկայացուցիչներին ազգա-

www.journal.lawinstitute.am

կան լինելու հանգամանքը, ինչպես նաև ուղղակի կամ անուղղակի ձևով գործի ելքով շահագրգռված լինելը:

2007թ. Հայաստանի Հանրապետությունում կատարված դատավարական բարեփոխումների արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ուժը կորցրած են ճանաչվել փորձագետի բացարկյին և ինքնաբացարկյին վերաբերող դրույթները, ինչի արդյունքում կողմն այլևս զրկված է փորձագետին բացարկ հայտնելու ծանրակշիռ լծակից: Փորձագետի բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտի բացակայությունը մեր քաղաքացիական դատավարական օրենսդրությանը կարող է կասկածի տակ դնել փորձագետի կողմից դատարանին օբյեկտիվ և հավաստի եզրակացություն ներկայացնելու հնարավորությունը՝ դրանով իսկ խոչընդոտելով վեճի ճիշտ լուծմանը:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ կարծում ենք արդարացի կլինի վերականգնել փորձագետին բացարկ հայտնելու և նրա ինքնաբացարկի ինստիտուտները:

Այդ ինստիտուտի վերականգնումը կապահովի փորձագետի անաչառությունն ու օբյեկտիվությունն ապահովող լրջագույն իրավական երաշխիքները՝ հաշվի առնելով նաև քննակվող հարցի վերաբերյալ այլ երկրների փորձը: Որպես օրինակ նշենք, որ Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նույնպես նախատեսում է փորձագետին բացարկ հայտնելու ինստիտուտը, ընդ որում դա կատարվում է այն նույն հիմքերով, ինչը որ նախատեսված է դատավորին բացարկ հայտնելու համար:

Հետևաբար առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում վերականգնել փորձագետին բացարկ հայտնելու և նրա ինքնաբացարկի ինստիտուտները, վերականգնել մինչև 28.11.2007թ. գործող և հետագայում ուժը կորցրած ճանաչված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածում ամրագրված բացարկ հայտնելու հիմքերը՝ դրան գումարելով փորձագետի՝ գործի ելքով ուղղակի կամ անուղղակի շահագրգռված լինելու հանգամանքը:

Բացի նշվածից, ճիշտ կլինի, որ փորձագետի մոտ ձեռնահասության (հատուկ գիտելիքների շրջանակի) և արհեստավարժության (կոմպետենտության) բացակայությունը հիմք հանդիսանա փորձագետին բացարկ կամ ինքնաբացարկ հայտնելու

համար: Չնայած, որ մի շարք դատավարագետներ փորձագետի բացարկի կամ ինքնաբացարկի մասին նշելիս, արտահայտում են այն կարծիքը, որ առհասարակ կարիք չկա օրենքում ավելացնել այդ հիմքով փորձագետին բացարկ հայտնելը, քանի որ փորձագետի եզրակացությունը, ինչպես և բոլոր ապացույցները, ենթակա են դատարանի կողմից գնահատման, ուստի և այն կարող է դատարանի կողմից արժանահավատ տեղեկություն չհամարվել իր ծավալի, կատարած աշխատանքի, մեթոդների ընտրության կամ այլ հիմքով: Այդ դեպքում փորձագետը, չտիրապետելով համապատասխան գիտելիքների, անձամբ կարող է ինքնաբացարկ հայտնել⁴:

Մրա հետ դժվար է համաձայնվելը, քանի որ խնդիրը որակյալ եզրակացության կազմումն է և փորձագետին գնահատելը չափազանց դժվար է, քանի որ դատավորները չեն տիրապետում ու չեն էլ կարող տիրապետել հատուկ գիտելիքներին: Դատարանը գնահատում է փորձագետի եզրակացությունը մեծամասամբ ֆորմալ տվյալների հիման վրա: Ինչ վերաբերում է փորձագետի կողմից փորձաքննություն իրականացնելուց հրաժարվելուն, ապա նա կարող է օբյեկտիվորեն շփոթվել, չտեսնել իր սխալները: Այդ իսկ պատճառով հակված ենք այն կարծիքին, որ փորձագետի կողմից ոչ կոմպետենտության հայտնաբերման պահից դեռ սկզբնական շրջանում՝ փորձաքննության նշանակման պահին, պետք է հնարավորություն տրվի բացարկ կամ ինքնաբացարկ կիրառելու համար:

Փորձագետի անաչառության ապահովման երաշխիքներից է քաղաքացիական դատավարության օրենսդրությանը վերջինիս համար ճիշտ և օբյեկտիվ եզրակացություն տալու պարտականությունը ու դրա խախտման համար պատասխանատվության նախատեսումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Անձը ում հանձնարարված է փորձաքննություն կատարել, պարտավոր է ներկայանալ դատարանի կանչով և օբյեկտիվ եզրակացություն տալ իրեն առաջադրված հարցերի հիման վրա»: Այն փաստը, որ փորձագետը պարտավոր է ներկայանալ դատարանի կանչով և չներկայանալու հետևանքների մասին կարելի է կռահել հիմք ընդունելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 7-րդ կետը, ըստ որի փորձագետի միջո-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ցով իրականացվող ապացուցման նկատմամբ կիրառվում են վկայի միջոցով իրականացվող ապացուցման կանոնները և հետևաբար ենթադրվում է, որ նրան կարելի է բերման ենթարկել:

Փորձագետը պարտավոր է տալ օբյեկտիվ և ճիշտ եզրակացություն, քանի որ դատարանը նրան նախազգուշացնում է ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին, որի վերաբերյալ փորձագետից վերցված ստորագրությունը կցվում է դատական նիստի արձանագրությանը (Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդված, կետ 6):

Սակայն այստեղ հարց է առաջանում, արդյո՞ք փորձագետի կողմից եզրակացություն տալը դասվում է նրա իրավունքների, թե՛ նրա պարտականությունների շարքին: ՀՀ օրենսդրությունը միանշանակ չի պատասխանում այս հարցին, ի տարբերություն ՌԳ օրենսդրության, ըստ որի, փորձագետը պարտավոր է ընդունել դատարանի կողմից իրեն հանձնարարված փորձաքննությունը և կատարել իրեն ներկայացված ողջ նյութերի հետազոտություն (ՌԳ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մաս): Սակայն, վերլուծելով ՀՀ ոլորտը կարգավորող օրենսդրությունը, պարզ է դառնում հետևյալ պատկերը: Ինչ վերաբերում է նրա օբյեկտիվ եզրակացություն տալուն, ապա նախազգուշացման թերթիկ ստորագրելը հարցին տալիս է միայն մասամբ պատասխան, իսկ ի՞նչպես վերաբերել այն հարցին, թե արդյո՞ք նա պարտավոր է եզրակացություն տալ, թե դա միայն նրա իրավունքն է և ցանկացած ժամանակ փորձագետը կարող է հրաժարվել եզրակացություն ներկայացնելուց՝ անգամ չհիմնավորելով դրա պատճառը, ինդիքը առավել քան բարդանում է այն ժամանակ, երբ փորձաքննությունը հանձնարարվում է ո՛չ թե փորձագիտական հաստատությանը, այլ՝ որպես փորձագետ նշանակված մասնագետների:

Կարծում ենք, որ ամեն դեպքում փորձագետի կողմից եզրակացություն տալը նրա իրավունքն է, ոչ թե՛ պարտականությունը, իսկ արդեն եզրակացություն տալու դեպքում, այսինքն՝ երբ իր կամքով որոշել է տալ եզրակացություն, ապա նոր միայն այն հանդիսանում է նրա պարտականությունը, որն էլ դիտվում է օբյեկտիվ եզրակացություն տալու

պարտականություն:

Դա կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ ներկայումս փորձագետի, ինքնաբացարկի ինստիտուտի բացակայության դեպքում, եզրակացություն տալը միանշանակ տեղին է դասել նրա իրավունքների, այլ ոչ թե պարտականությունների շարքին:

Սույն խնդիրը հստակ ձևակերպված է ՌԳ օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Դատական փորձագիտական գործունեության մասին» դաշնային օրենքի 16-րդ հոդվածում ամրագրված է, որ փորձագետը պարտավոր է ընդունել և կատարել փորձագիտական հիմնարկների ղեկավարի կողմից իրեն հանձնարարված փորձաքննությունը, անցկացնելու ամբողջական հետազոտություն իրեն ներկայացված գործի նյութերի և օբյեկտների վերաբերյալ, տալու օբյեկտիվ և հիմնավորված եզրակացություն՝ իրեն հանձնարարված հարցերի շուրջ: Այստեղից պարզ երևում է, որ հոդվածը ամբողջական է և լրացված՝ զերծ տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորություններից:

Խոսելով դատական փորձագետների մասին՝ անհրաժեշտ է տարբերակել դատական փորձաքննությունը՝ դատական փորձագետներով հանդերձ ոչ դատական փորձագիտական հաստատություններից՝ ոչ դատական փորձագետներով համապատասխանաբար, որոնք պատվիրվում են գործին մասնակցող անձանց կողմից՝ դրանց արդյունքները իրենց պահանջների և առարկությունների հիմքում դնելու նպատակով⁵:

Ոչ դատական փորձաքննության անցկացման և դրա արդյունքում ստացված եզրակացությունը դատարանի վճռի հիմքում դնելու իրավաչափության հարցին գործնականում անդրադարձել է Վճռաբեկ դատարանը: Վերջինս, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի որևէ հոդվածով նախատեսված չէ դատավարության մասնակցի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննության անթույլատրելիությունը, նման եղանակով ստացված փորձագիտական եզրակացությունները դիտարկել է որպես թույլատրելի ապացույց⁶:

Այստեղ նպատակահարմար ենք գտնում անդրադառնալու Քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախազգծի 74-րդ հոդվածին՝ համաձայն որի «Գործին մասնակցող անձի ներկայացրած փորձագետի եզրակացությունն իր ապացուցողա-

www.journal.lawinstitute.am

կան նշանակությամբ հավասարագոր է առաջին ատյանի դատարանի որոշմամբ նշանակված փորձաքննության արդյունքում ստացված փորձագետի եզրակացությանը, եթե այն կատարած փորձագետը մինչև նախնական դատական նիստի ավարտը դատարանի առջև գրավոր հաստատում է այն՝ նախագրուշացվելով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին»: Ըստ էության այս նորմի նախագիծը հանդիսանում է ոչ դատական փորձագետի կողմից ոչ դատական փորձաքննության իրականացման նախադրյալ:

Գործնականում արտադատական փորձաքննության արդյունքները դատական գործընթաց ներգրավվում են որպես գրավոր ապացույց⁷: Արտադատական փորձաքննությունը կոնկրետ մասնագիտացված փորձագիտական հաստատության հանձնարարելու դեպքում, փորձագետը նշանակվում է վերջինիս ղեկավարի կողմից՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշումը ստանալուց հետո, ուստի դատարանի՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ նշվում է ո՛չ թե փորձագետի անունը, այլ՝ այն մասնագիտացված փորձագիտական հաստատության անվանումը, որին հանձնարարվում է փորձաքննության կատարումը: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը վերաբերում է ոչ միայն դատական փորձագետին, այլ նաև՝ դատարանի որոշման հիման վրա մասնագիտացված փորձագիտական հաստատության ղեկավարի կողմից որպես փորձագետ նշանակված աշխատակցին: Ուստի փորձագետ նշանակվող անձը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արհեստի և արվեստի կամ այլ բնագավառի համապատասխան հատուկ գիտելիքների, այսինքն՝ լինի ձեռնահաս և ունենա համապատասխան բնագավառի մասնագետի որակավորում, որը հաստատված է օրենսդրությամբ սահմանված կարգով: Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ, որպես փորձագետ, նշանակվում է մման հաստատությունների աշխատակից չհանդիսացող անձը, համապատասխան որակավորման առկայության կամ բացակայության հարցը լուծում է դատարանը կամ փորձագիտական հաստատության ղեկավարը՝ հաշվի առնելով տվյալ մասնագետի կրթությունը, գիտական աստիճանը, աշխատանքային փորձը, նրա ձեռնահասության մասին վկայող այլ հանգամանքները:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրյալը, պետք է նշել, որ քաղաքացիական գործով փորձագետը, անկախ նրանից, թե հանդիսանում է դատական կամ արտադատական փորձագետ,

1. պետք է լինի գործով չշահագրգռված անձ,
2. հատուկ գիտելիքների ոլորտում իրագեկ մասնագետ,
3. ունակ լինի կազմելու փորձագիտական եզրակացություն՝ հատուկ դատավարական ընթացակարգով,
4. նշանակվի հատուկ մարմնի կողմից:

Անդրադառնալով փորձագետի գործունեությանը՝ պետք է նշել, որ դրան բնորոշում են ինքնուրույնությունը, անհատականությունը, անձնական պատասխանատվությունն իր կողմից կատարված աշխատանքի արդյունքների համար: Փորձագետի ինքնուրույնությունն արտահայտվում է նրանում, որ իր իրավասությունների սահմաններում ազատ է հետազոտությունների կատարման մեթոդիկայի ընտրության հարցում, սակայն այդ ինքնուրույնությունը հարաբերական է, քանի որ նրա կողմից ընտրված հետազոտության մեթոդները և միջոցները չպետք է խախտեն իրեղեն ապացույցների հետ վարվելու կանոնները, դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները, համապատասխանեն համամարդկային բարոյական նորմերին:

Փորձագետի ինքնուրույնությունը նշանակում է նաև հետազոտություն կատարելիս նրա ենթակայության բացակայություն, որպես մասնագետ՝ իր իրավասության շրջանակներում հարցերը լուծելիս անկախ պետք է լինի անմիջական ղեկավարի, դատավորի, գործի հարցում շահագրգիռ անձանց ազդեցությունից:

Փորձագետի իրավասությունը՝ կոնկրետ տեսակի, ձևի և ենթատեսակի դատական փորձաքննության տեսությանը և մեթոդիկային տիրապետելն է: Ընդունված է տարբերել փորձագետի իրավասության գիտական և սուբյեկտիվ կողմերը: Փորձագետի գիտական իրավասությունը հատուկ գիտելիքների ծավալն է, որոնց պարտավոր է տիրապետել դատական փորձաքննության տվյալ տեսակի, ձևի, ենթատեսակի յուրաքանչյուր ներկայացուցիչ:

Կոնկրետ անձի իրավասության սուբյեկտիվ կողմը կոնկրետ ձևի, ենթատեսակի փորձաքննությունների տեսությանը և մեթոդիկային տիրապե-

տելու աստիճանն է: Այն կախված է տվյալ անձի փորձից, նրա բազային և հատուկ կրթությունից, նոր մեթոդների և մեթոդիկաների նրա իմացությունից:

ՀՀ գործող դատավարական օրենսգրքերում ոչինչ չի ասվում դատական փորձագետի անկախության մասին: Փորձագետի անկախությունը հանդիսանում է դատավարական ինքնուրույնության հիմքը, որը երաշխավորվում է իրավասու մարմնի կողմից: Փորձագետի անկախությունը ուղակիորեն առնչվում է անկախ և անկողմնակալ դատարանի գործունեության հետ, փորձագետի անկախությունը այն հայելին է, որն աներկբայորեն կարելի է ասել արտացոլում է դատարանի անաչա-

ռության մակարդակը:

Դատական փորձագետը անկախ է մեթոդների, միջոցների և կիրառած մեթոդիկայի ընտրության հարցում, որն իր կարծիքով անհրաժեշտ է կոնկրետ օբյեկտների փորձաքննության համար: Փորձագետի նկատմամբ որևէ ճնշում գործադրելը կամ այլ կերպ նրա աշխատանքին խոչընդոտելը դատական գործի մասնակիցների կամ այլ անձանց կողմից անթույլատրելի է ու պաշտպանվում է քրեական օրենսգրքով:

¹ Տե՛ս Шляхов А. Р. Судебная экспертиза: Организация и проведение. М., 1979, С. 24.

² Տե՛ս Թադևոսյան Լ. «Դատական փորձագետի դատավարական վիճակը», Պետություն և իրավունք, 2009, N 4, էջ 90:

³ Տե՛ս Давтян А.Г. Экспертиза в гражданском процессе. М, 1995 С. 19-20.

⁴ Տե՛ս Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации. Со вступительной статьей В.Ф. Яковлева, С. 221.

⁵ Տե՛ս Սեդրյան Ս.Գ. Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 211:

⁶ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ 3-168 (ՎԳ) 2008թ. քաղաքացիական գործով 23.04.2008թ. որոշումը և թիվ 3-657 (ՎԳ) 2008թ. քաղաքացիական գործով 28.11.2008թ. որոշումը:

⁷ Տե՛ս Ղարալյան Ա. Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական դատավարությունում, Դատական իշխանություն, Երևան, 2010, էջ 54:

⁸ Տե՛ս Россинская Е.Р. Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе, М.: Норма, 2006, С. 44.

Գրականություն

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
2. ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ 3-168 (ՎԳ) 2008թ. քաղաքացիական գործով 23.04.2008թ-ի թիվ 3-657 (ՎԳ) 2008թ. Քաղաքացիական գործով 28.11.2008թ-ի որոշումները:
3. Федеральный закон о Государственной судебно-экспертной деятельности в Российской Федерации, 31.05.2001г.
4. Ս.Գ. Սեդրյան «Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում», ԵՊՀ հրատ., Երևան, 2012թ. էջ 211-228:
5. Թադևոսյան Լ. «Դատական փորձագետի դատավարական վիճակը», Պետություն և իրավունք, 2009թ., N 4, էջ 90:
6. Ա. Ղարալյան «Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական դատավարությունում», Դատական իշխանություն, Երևան, 2010թ. էջ 54:
7. Давтян А.Г. Экспертиза в гражданском процессе. М., 1995, С. 19.
8. Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации. Со вступительной статьей В.Ф. Яковлева, С. 221.

9. Россинская Е.Р. Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе М.: Норма, 2006. С. 44, С. 656.
10. Аверьянова Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г. Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе. Уч., 2008, Изд-во: Норма, М., С. 205, С. 400.
11. Шляхов А. Р. Судебная экспертиза: Организация и проведение. М., 1979. С. 24.
12. Сахнова Т.В. Судебная экспертиза. М.: Городец, 2000 С. 101.

Армен Езекян

Заведующий кафедрой юриспруденции академии
государственного управления Республики Армения,
кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

Роль и значение судебного эксперта в гражданском процессе

Основная цель исследования-выявление понятия судебного эксперта, демонстрация его профессиональных возможностей и полезности, детализация сферы деятельности. Предметом исследования является уточнение статуса судебного и внесудебного эксперта, его роль и значение в практике. Исходя из необходимости более детального теоретического и практического изучения правового регулирования вышеуказанных вопросов, с нашей стороны будут использованы определенные исследовательские методы, цель которых обеспечить объективность и правдоподобность исследования и его научных результатов.

Ключевые слова: *судебный эксперт, особые знания, субъект экспертизы, институт предъявления отвода эксперту, независимость эксперта.*

Armen Yezekyan

Public Administration Academy of RA
Head of Department of Law
PhD in Law, associate professor

SUMMARY

The role of legal expert in civil litigation

The research is dedicated to discover the definition of legal expert, representation of expert's special legal status, nature and peculiarities, including professional abilities and compliance, his activities in detail. The article discusses the status of judicial and non-judicial experts, their roles and functions in practice. Taking into consideration the necessity of the detailed theoretical and practical analysis of legal regulation of above mentioned issues we shall use certain research methods. The usage of that methods aims to ensure the objectivity and trustworthiness of the research and its scientific results.

Keywords: *Legal expert, special knowledge, the subject of expertise, expert withdrawal, expert independence.*